ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
Քարաձորի համայնքապետարան

N 12 30 հունվարի 2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա.Նալբանդյանին

Կից Ձեզ եմ ներկայացնում համայնքի ղեկավարի N 03 և 04 որոշումները:
Առդիր՝ 2 էջ:

Համայնքի ղեկավար Ա.Մատինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք, հասցե Լոռու մարզ գ.Քարաձոր
հեռախոս 093395661 էլ. փոստ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» հունվարի 2017 թվականի N 03

## ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓՈՓՈԽՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1 մասով և առաջնորդվելով Քարաձոր համայնքի 2017թ. բյուջեում եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխման փոփոխություններ կատարելու մասին ավագանու 25.01.2017թ. N 02-Ն որոշմամբ՝ հաստատել 2017թ. փոփոխված բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՄԱՍԻՆՅԱՆ

2017թ. հունվարի 25

գ.Քարաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք, հասցե Լոռու մարզ գ.Քարաձոր
հեռախոս 093395661 էլ. փոստ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» հունվարի 2017 թվականի N 04

## ՀՈՂԱՄԱՍԻՑ ՄԻԱՎՈՐԻ ԱՌԱՆՁՆԵՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 16.06.2005 թվականի թիվ 910-Ն որոշումով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1.Հաստատել ՀՀ կառավարության 16.06.2005 թվականի թիվ 910-Ն որոշմամբ Քարաձոր համայնքին փոխանցված, համայնքային սեփականություն հանդիսացող 06-109-0202-0001 ծածկագրով 4.72 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքից առանձնացված 0.30275 հա հողամասի սահմանները՝ համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծի:
2.Քարաձոր համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-109-0202-0001 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքից առանձնացված 0.30275 հա հողամասը, համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի, առանձնացնել որպես առանձին միավոր:
3.Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայական տրանադրելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՄԱՏԻՆՅԱՆ

2017թ. հունվարի 25

գ.Քարաձոր